**Արձանագրություն N 2**
ՄՍԾ ԳՀԱՇՁԲ-24/3 ծածկագրով գնանշման հարցման
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

6 սեպտեմբերի 2024թ
ժամը 10:30

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Սողոմոն Մաթևոսյանը
անդամներ՝ Հայկ Ղազարյանը, Գեղամ Սարգսյանը, Հասմիկ Ղուլյանը, Վարդան Ֆրանգուլյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան

ՄՍԾ ԳՀԱՇՁԲ-24/3 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 2024թ սեպտեմբերի 4-ին կայանալիք հայտերի բացման և գնահատման նիստն իրավազոր չէր՝ բացակայում էր հանձնաժողովի (armeps.am) համակարգում բացող անդամ՝ Արա Վարդանյանը /գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ: Հնարավոր չէր ապահովել Միասնական սոցիալական ծառայության գլխավոր քարտուղարի 2024 թվականի օգոստոսի 22-ի № Ա/184 հրամանով գնահատող հանձնաժողովի անհատական կազմում ընդգրկված հանձնաժողովի (armeps.am) համակարգում բացող անդամ Արա Վարդանյանի ներկայությունը, ուստի կասեցվել է գնման գործընթացը և հետագա բնականոն գործընթացն ապահովելու նպատակով, 2024թ. սեպտեմբերի 5-ի № № Ա/196 հրամանով հանձնաժողովի կազմում կատարվել է փոփոխություն և հանձնաժողովի կազմում ընդգրկվել է Իրավաբանական վարչության դատական գործերի բաժնի գլխավոր իրավաբան՝ Վարդան Ֆրանգուլյանը:

**I. Հայտերի բացման մասին**

-----------------------------------------------------------------------
(Սողոմոն Մաթևոսյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

ա/ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| N | *Մասնակցի անվանումը* | | *Մասնակցի կապի միջոցները* |
|---|---|---|---|
| 1 | 2 | | 3 |
| 1 | «Ս.ՀՈՍՈ» ՍՊԸ* | - | ք.Երևան Հր.Աճառյան փ.36շ.27բն , հեռ. 099 400 122, smilitonyan@mail.ru |
| 2 | «ԴԱՎԱԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | - | Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Կոմիսարների 67, հեռ. +37498001005, h.azizyan001@mail.ru |
| 3 | «Հարություն և Արգիշտի» ՍՊԸ | - | ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Աղայան 74/4, հեռ. 094 60 55 60, alekterm@mail.ru |
| 4 | Ա/Ձ Լիլիթ Մալխասյան* | - | ք. Աշտարակ, Պռոշյան 57, հեռ. 095566614, Vanushl@bk.ru |
| 5 | «ԲԵՐԴՇԻՆ» ՍՊԸ | - | Արարատի մարզ, գ.Ոստան, Թեհլերյան 14, հեռ. 055 595010, berdshin@mail.ru |

*Մասնակիցը ԱԱՀ վճարող չէ

բ/ էլեկտրոնային (ARMEPS) համակարգի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերը դիտվել է որպես (պիտանի) հայտեր:

գ/ Մասնակիցների կողմից աշխատանքների կատարման համար առաջարկված գինը ըստ չափաբաժինների հետևյալն է.

| Հ/Հ | Մասնակցի | | | |
|---|---|---|---|---|
| | անվանումը | առաջարկած գինը ըստ չափաբաժինների՝ առանց ԱԱՀ-ի (ՀՀ դրամ) | | |
| | | 1-ին չափաբ. | 2-րդ չափաբ. | 3-րդ չափաբ. |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | «Ս.ՀՈՍՈ» ՍՊԸ* | 1100000 | - | 1852000 |
| 2 | «ԴԱՎԱԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 895000 | 1695000 | 1995000 |
| 3 | «Հարություն և Արգիշտի» ՍՊԸ | 860525 | 1657000 | 1915700 |
| 4 | Ա/Ձ Լիլիթ Մալխասյան* | 839000 | 2000000 | 2100000 |
| 5 | «ԲԵՐԴՇԻՆ» ՍՊԸ | - | 1849000 | 1899000 |
| | գնման գինը (ՀՀ դրամ) | 1323882 | 2549106 | 3024365 |

դ/ Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

ե/ Գնման առարկայի բնութագրերի հիմնավորումներ չեն պահանջվել և ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

**II. Հայտերի գնահատման մասին**

---------------------------------------------------------------

(Սողոմոն Մաթևոսյան)

2. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց հայտերով ներկայացված փաստաթղթերը և արձանագրեց, որ. բոլոր մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը՝ պիտանելիության չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, բացառությամբ՝ «Ս.ՀՈՍՈ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտի:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց բոլոր մասնակիցների կողմից հայտերով ներկայացրած փաստաթղթերը և արձանագրեց, որ.

ա) «Հարություն և Արգիշտի» ՍՊԸ-ի, Ա/Ձ Լիլիթ Մալխասյանի, «ԲԵՐԴՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

բ/ «ԴԱՎԱԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ներկայացրած դիմում-հայտարարությունը /հավելված 1/ չի համապատասխանում ՄԾ ԳՀԱՇՁԲ-24/3 ծածկագրով հրավերով սահմանված վավերապայմաններին՝ մասնավորապես.

1) դիմում հայտարարության 1-ին պարբերության մեջ պատվիրատուի անվանումը սխալ է գրված, մասնակցության չափաբաժինների թիվը/համարը չի համապատասխանում /հավելված 2/ գնային առաջարկով և համակարգով ներկայացվածին: Դիմում հայտարարության մեջ բացակայում է ՄԾ ԳՀԱՇՁԲ-24/3 ծածկագրով հրավերի հավելված 1-ի վերջին պարբերությունը:

գ) «Ս.ՀՈՍՈ» ՍՊԸ-ի հայտում բացակայում ՄԾ ԳՀԱՇՁԲ-24/3 ծածկագրով հրավերի 4.3 կետի 4-րդ ենթակետով և հրավերի 2-րդ մասի 2.6-րդ կետով սահմանված՝ իր կողմից հաստատված հավաստումը համաձայն հավելված N 1.1-ի: Դիմում հայտարարության /հավելված N 1/ մեջ բացակայում է ՄԾ ԳՀԱՇՁԲ-24/3 ծածկագրով հրավերի հավելված 1-ի վերջին պարբերությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Հիմք ընդունելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը որոշեց.

ա) ՄՍԾ ԳՀԱՇՁԲ-24/3 ծածկագրով գնանշման հարցման հրավերի 8.9 կետի համաձայն մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և համակարգի միջոցով տեղեկացնել «ԴԱՎԱԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ -ին և «Ս.ՀՈՍՈ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

բ) Հայտերի գնահատման արդյունքների ամփոփելու նպատակով գնահատող հանձնաժողովի նիստ հրավիրել 2024թ. սեպտեմբերի 10-ին ժամը 10:30-ին ք. Երևան, Նալբանդյան 13, 12-13 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

նախագահ ______________ Սողոմոն Մաթևոսյան

անդամներ՝ ______________ Հայկ Ղազարյան

______________ Գեղամ Սարգսյան

______________ Հասմիկ Ղուլյան

______________ Վարդան Ֆրանգուլյան

քարտուղար՝ ______________ Գ. Ջանջուղազյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

շահերի բախման բացակայության մասին

ք. Երևան

6 սեպտեմբերի 2024թ.

ՄՍԾ ԳՀԱՇՁԲ-24/3 ծածկագրով գնանշման հարցման ձևով աշխատանքների ձեռքբերման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Սողոմոն Մաթևոսյանս, անդամներ՝ Հայկ Ղազարյանս, Գեղամ Սարգսյանս, Հասմիկ Ղուլյան, Վարդան Ֆրանգուլյանս հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Ջանջուղազյանս նշված ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո հայտարարում ենք, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունենք շահերի բախում:

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | | Սողոմոն Մաթևոսյան |
| անդամներ՝ | | Հայկ Ղազարյան |
| | | Գեղամ Սարգսյան |
| | | Հասմիկ Ղուլյան |
| | | Վարդան Ֆրանգուլյան |
| քարտուղար՝ | | Գ. Ջանջուղազյան |

**Արձանագրություն N 3**
ՄՍԾ ԳՀԱՇՁԲ-24/3 ծածկագրով գնանշման հարցման
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

10 սեպտեմբերի 2024թ
ժամը 10:30

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Սողոմոն Մաթևոսյանը
անդամներ՝ Հայկ Ղազարյանը, Գեղամ Սարգսյանը, Հասմիկ Ղուլյանը, Վարդան Ֆրանգուլյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան

**I. Հայտի գնահատման արդյունքների մասին**

(Սողոմոն Մաթևոսյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

Հրավերով սահմանված ժամկետում և կարգով «ԴԱՎԱԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն և «Ս.ՀՈՍՈ» ՍՊԸ-ն ներկայացրել են հայտով ներկայացրած փաստաթղթերի շտկված տարբերակները: Հանձնաժողովին է տրամադրվել ներկայացրած փաստաթղթերի շտկված տարբերակները:

1.1. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց մասնակիցների կողմից ներկայացրած շտկված փաստաթղթերը և արձանագրեց, որ ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Գնահատող հանձնաժողովը որոշեց բոլոր մասնակիցների հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

**II. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների ամփոփման մասին**

(Սողոմոն Մաթևոսյան)

2. Ներկայացված գնային առաջարկների և գնահատման արդյունքների հիման վրա հանձնաժողովը որոշեց.

ա/ Լիլիթ Մալխասյան Ա/Ձ-ին ընտրված մասնակից ճանաչել՝ 1-ին չափաբաժնի համար:

բ/ «Հարություն և Արգիշտի» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչել՝ 2-րդ չափաբաժնի համար:

գ/ «Ս.ՀՈՍՈ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչել՝ 3-րդ չափաբաժնի համար:

Ընտրված մասնակիցներ են ճանաչվել որպես բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից, նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

**III. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին**

(Սողոմոն Մաթևոսյան)

3. Հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել և նրա հետ կնքել պայմանագիր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով և հրավերով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

նախագահ Սողոմոն Մաթևոսյան

անդամներ՝ Հայկ Ղազարյան

Գեղամ Սարգսյան

Համիկ Ղույան

Վարդան Ֆրանգուլյան

քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան